

Զրույց - զեկուցում Թումանյանի միջնակարգ դպրոցում

<<Թմրամոլություն և Հանցագործություն >> թեմայով

Մարդկությունն իր պատմության ճանապարհին անցել է բազմաթիվ աղետների եւ դժբախտությունների միջով: Որպես կանոն՝ պատերազմներն սկսվել եւ ավարտվել են, ջրհեղեղները, փոթորիկներն ու երկրաշարժները եւս ունեցել են սկիզբ ու վերջ: Մակայն թմրամոլություն կոչվող հրեշը ոտք դրեց Երկիր մոլորակ եւ ոչ միայն չի հեռանում, այլեւ մշտական բնակություն հաստատելով՝ սնվում է բացառապես մարդկային կյանքերով՝ կործանելով ճակատագրեր, քայքայելով ընտանիքներ, ցավ ու դառնություն պատճառելով միլիոնավոր մարդկանց:

Չկա ուրիշի դժբախտություն, հատկապես երբ խոսքը վերաբերում է երիտասարդներին եւ դեռահասներին: Թմրամոլության խնդիրն առկա է եղել դեռեւս վաղ ժամանակներից: Ոչ ոք, սակայն, չէր պատկերացնի, որ կգա մի ժամանակ, երբ այն կկրի զանգվածային բնույթ՝ վտանգելով սերունդների առողջությունն ու կյանքը:

Թմրանյութերը, ցավոք, դարձել են ժամանակակից շատ երիտասարդների ոճն ու կերպարն ամբողջացնող արքեսուարներից մեկը: Մինչ գիտնականները փորձում են գտնել կյանքի կենսահեղուկը՝ երկարակեցությանը նպաստելու համար, թմրանյութերով զվարճանալը շատ երիտասարդների եւ անչափահասների տանում է դանդաղ ինքնասպանության: Եթե տարիներ առաջ 16-17 տարեկան թմրամոլը համարվում էր կլինիկական հազվագյուտ երեւոյթ, ապա այսօր որոշ երկրներում դա առօրեական է դարձել:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ ողջ աշխարհում գրանցված է 50 միլիոնից ավելի թմրամոլ: Միայն Ռուսաստանում գրանցված են մոտ մեկ միլիոն, որի 75%-ը երիտասարդներ են: Եվ սա միայն սառցաբեկորի տեսանելի մասն է: Բարեբախտաբար, մեզ մոտ անչափահասների ու երիտասարդների թմրամոլությունն այնքան տարածված չէ, որքան Ամերիկայում կամ Ռուսաստանում: Մակայն հաշվի առնելով տարածման միտումները՝ իրավապահ մարմինների ակտիվ պայքարի հետ մեկտեղ անչափ կարեւոր է հասարակության մոտեցումը: Շատ ավելի հեշտ է կանխել, քան բուժել հիվանդությունը: Բժշկության այս ոսկե կանոնն առավել արժեւորվում է, երբ խոսքը վերաբերում է թմրամոլությանը: Մենք պետք է գիտակցենք, որ պետության եւ իրավապահ մարմինների կողմից իրականացվող միջոցառումները շատ ավելի արդյունավետ կլինեն, եթե կարողանանք հասնել այն բանին, որ նվազի թմրանյութերի պահանջարկը: Ինչպես ասում են՝ եթե չկա պահանջարկ, չի լինի առաջարկ: Հետեւաբար, շատ կարեւոր է հասկանալ ծնողների եւ ընտանիքի դերը, բացահայտել դրդապատճառները, որոնք դեռահասներին ստիպում են տարվել թմրանյութերով:

Պետք է զգոն եւ ուժեղ լինենք՝ դիմակայելու նրանց, ովքեր սնվում են մեր երեխաների կյանքով: Թմրանյութեր իրացնողների համար մեծ հաշվով միեւնոյն է, թե ում կնստեցնեն ասեղի վրա՝ ծերունու, երիտասարդի, թե երեխայի: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ թմրաբիզնեսն աշխարհում համարվում է ամենաեկամտաբերներից մեկը: